

Գ. Շախմատ :

Ութը երկուսի մօտ անցած տարի յու-
նիսի երկուքին իրիկուան ժամը ու-
թին յանկարծ ահաւոր ձայն մը լը-
սուեցաւ՝ ինչպէս թէ չորս թնդանօթ
մէկէն նետուէին. թնդումէն ետքն
ալ սուլելու պէս ձայն մը ելաւ, ինչ-
պէս հրացանի գնտակը օդին մէջէն
անցնելու ատեն կը հանէ : Եւ միջո-
ցին գեղացի մը որ արտէն կը դառ-
նար՝ տեսաւ որ իրմէ քիչ մը հեռուն
երկնքէն բան մը ինկաւ դաշտի մէջ,
ու ամպի պէս փռի մըն ալ մէկտեղ
տեսնուեցաւ. մօտեցաւ ան տեղին,
տեսաւ որ գետինը փոս եղած է մէկ
մեթրի չափ խորութեամբ, և փոսին
մէջ գտաւ երկնքէն ընկած շանթա-
քար մը, որուն ծանրութիւնը կը հաւ-
նէր 7 քիլոկրամ. դրսի մակերևոյթը
սովորական շանթաքարերուն պէս սև
ու խորտուբորտ էր, և մէջը կապարի
գոյն, տեղ տեղ ալ երկաթի փայլու-
նութիւն ունէր :

ԲԱՆԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ. Դաշ :

Երեսուցի մէջ ամենէն աւելի
մարդուս ընտանին ու հաւատարիմը
շունն է. և թէպէտ քառսունէն ա-
ւելի տեսակ ունենալուն՝ ամենուն
ձեն ու մեծութիւնն ալ իրարմէ տար-
բեր են, բայց ընդհանրապէս բնաւո-
րութիւննին նոյն է : Շան սովորա-
կան կերակուրը միս է. և ստամոքսը
այնչափ տաք է՝ որ ոսկոր ալ կը մար-
սէ : Տարին երկու անգամ կը ցընկնի՝
ինչուան տասուիրեք լակոտ : Որչափ
ալ վազէ, տաքնայ ու փրփրի, ամե-
նէին չբրտնիր, հապա միայն լեզուն
դուրս կը ձգէ որ զովանայ : Թեթև

հիւանդութի ունեցած ատենը կ'եր-
թայ շանխաղող ըսուած բոյսը կ'ու-
տէ որ սիրտը ետ գայ, անով կ'առող-
ջանայ : Շունը կրնայ այնչափ կրը-
թութիւն աւնել, որ մէկ քանի ծա-
ռայութիւններ ալ սորվելով հաւա-
տարմութիւն իր պարտքը կը կատարէ :
Եւ կենդանւոյս բուն գեղեցիկ կատա-
րելութիւնը իր տիրոջը վրայ ունե-
ցած սէրը, հաւատարմութիւնը, արթ-
նութիւնը, ճարտարութիւնն ու խե-
լացութիւնն է : Եւ որ համար հոս մէկ
քանի ստոյգ ու զուարճալի դիպուած-
ներ դնենք՝ որ աս կատարելութիւն-
ները աղէկ իմացուին :

Հովուին մէկը օր մը իր շունը ու
իրեք տարեկան տղան մէկտեղ դաշ-
տը տարեր է եղեր. ինքը դիմացի լե-
ռան վրայ ելել ուզելով՝ կը տեսնէ որ
տղան չկրնար քալել, կը թողու անի-
կայ հոն դաշտին մէջ, ու կ'ապրսպրէ որ
տեղէն չջարժի : Հովուը ուզած տե-
ղը կը հասնի չհասնիր, մէյմնալ յան-
կարծակի օդը կը պղտորի, լեռը մշուշ
կը պատէ, ցորեկը գիշեր կը դառ-
նայ : Եւ գեղացին շուտ մը լեռնէն
վար կ'իջնայ դէպ 'ի իր տղուն կեցած
տեղը. բայց մութը սաստիկ ըլլալուն՝
ճամբան կը կորսնցընէ. վերջապէս
յոյսը կտրած՝ լալով ողբալով այրի մը
մէջ կը մտնէ, ու ան գիշերը հոն կ'ան-
ցընէ : Եւ տուն կանուխ կ'ելլէ անկէ
կը վազէ դաշտը, տղան չկայ. ուրիշ
գեղացիներու հետ ալ կը փնտռէ՝ չը-
գտնէր, կը դառնայ իր տունը : Հոն
իմանայ որ առջի օրը շունը եկեր՝ կը-
տոր մը հաց առեր փախեր է : Եւ լե-
նորէն կը փնտռէ տղան օրերով, և ա-
մէն իրիկուն տուն դարձած ատենը
կը լսէ թէ շունը եկեր հացին կտորը
առեր փախեր է : () ր մըն ալ հովուը
տունը կը սպասէ, և շունը եկածին
պէս՝ անոր ետեւէն կ'իջնայ որ իմա-
նայ թէ ո՛ր կը տանի հացին կտորը :
Շունը հացը բերանը կ'առնէ, կը
վազէ կ'երթայ բարձր ժայռերէն շիփ-
շիտակ վար կ'իջնայ, կը մտնէ այրի մը
մէջ, մարդն ալ ետեւէն : Եւ ի՞նչ ալ

տեսնէ հովիւն որ իր զաւակը լալով նստեր է՝ շանը բերած հացին կտորը կ'ուտէ . շունն ալ քովը նստեր՝ տղուն վրան կը նայի խղճալու պէս : Կ'երեւայ թէ աս տղան ճամբան չգիտնալով մոլորեր գնացեր է ինչուան ժայռերուն վրայ . հոնտեղէն ալ սահեր է ինչուան այրին բերանն ու հոն մընացեր է եղեր :

Ինուշեղէն ծախողին մէկը, որ պըզտիկ զանգակ մը զարնելով կը պտտէր քաղքի մը մէջ, օր մը դեղածախի մը շանը կտոր մը անուշեղէն կը նետէ : Հետեւեալ օրն ալ շունը ան զանգակին ձայնը լրածին պէս՝ մէկէն կ'երթայ ան մարդուն հագուստէն կը խածնէ, թող չտար անկէ անցնելու, որ նորէն բան տայ իրեն : Ին ատենը մարդը ասոր քանի մը ստակ կը ցուցնէ, ու ձեռքովն ալ կը ցուցնէ անոր տէրը՝ որ խանութին դուռը կեցած էր : Իս տեսնելուն պէս շունը կը վազէ տիրոջը քով, կը սկսի քծնիլ աղաչել . տէրն ալ մէկ քանի ստակ կուտայ իրեն . շունը բերանը կ'առնէ ան ստակը, կը տանի ծախողին, ու կը գնէ անուշեղէնը՝ կ'ուտէ : Իս առուտուրը օրերով քշեր է կ'ըսեն :

Անքի մը մէջ ամէն օր քսան աղքատի կերակուր կը տրուի եղեր կէսօրուան ատենները . հոն շուն մըն ալ կայ եղեր որ անոնցմէ աւելցած բաներէն կ'ապրի, բայց շատ անգամ անօթի կը մնայ եղեր : Արբոր զանգակը կը զարնուի որ աղքատները ժողվին, ան ատեն ուտելու բաները կը դարանով՝ մը ներս կուտան . ասիկայ առանցքի՝ վրայ առած ըլլալով՝ մարդը դրսէն առանց տեսնուելու ան դարանին մէջ կը դնէ կերակուրներն ու կը դարձնէ որ ներսէն առնեն : () ր մը աս շունը անօթի մնացած ըլլալով, կը սպասէ որ աղքատները երթան, ու զանգակին չուանը բերանը կ'առնէ՝ կը սկսի բոլոր ուժովը քաշել : Երսէն կարծելով թէ աղքատի մը

պակաս եկեր է կերակուրը, դարանին մէջ ուտելիք կը դնեն ու կը դարձնեն . շունը կ'ուտէ կը կշտանայ : Այրու իրեք օր աս վարպետութիւնը ընելէն ետքը կ'իմացուի բանը . բայց անոր ճարտարութեանը փոխարէն՝ վաճառքի անկէ ետքը ամէն օր մէյմէկ կտոր միս աւելի կուտան եղեր իրեն :

Շունը շատ անգամ կոյր մարդկանց ճամբայ կը ցուցնէ . ինչպէս որ աս զարմանալի պատմութենէն ալ կ'իմացուի : Այր մոլորացկանին մէկը շուն մը ունի եղեր իրեն առաջնորդ, որ զինքը չէ թէ միայն վտանգներէ կ'ազատէր, հապա տներու խանութներու առջև ալ կը տանէր՝ որ ողորմութիւն տան տիրոջը : Արբոր աղքատը կը սկսէր աղօթք ընել՝ ողորմութիւն ուզել, շունը գետինը երկնցած կը պառկէր . թէ որ պատու հաններէն ստակ նետէին նէ, կ'երթար կ'առնէր բերնովն ու աղքատին գլխարկին մէջ կը դնէր . հաց ալ նետէին նէ չէր ուտէր, հապա տիրոջը կը տանէր, ու անոր տուածը կ'ուտէր :

Եւաւարին մէկը իր նաւակին մէջ կը քնանայ եղեր օր մը . մէյմ՝ ալ յանկարծ փութորիկ կ'ելլէ, նաւակին կապը կը քակուի, ու ցամաքէն շատ մը կը հեռանայ, քիչ կը մնայ որ մեծ նաւու մը պիտի երթայ զարնուի եղեր : Այլի շունը կը տեսնէ որ իր տիրոջը բանը գէշ է . կ'երթայ քովը, թաթովը անոր երեսին կը զարնէ, շապկէն կը քաշէ, այնչափ կը հաջէ, որ մարդը կ'արթննայ, կը խալճսի ան վրտանգէն :

Մարդուն մէկը ձեացընելով թէ հնդկաստանէն ինգղիս եկած վաճառական է, կ'երթայ մէկ իջևան մը կը բռնէ իրեն համար, և կ'ըսէ թէ աս իրիկուն իմ սնտուկս կը խրկեմ, առտուն կանուխ ալ ես կուգամ : Իրիկուան դէմ իրաւցընէ երկու հոգի սնտուկը շալկած կը բերեն կը հանեն վեր, ան մարդուն բռնած խուցը կը դնեն : Արբոր ամէն մարդ իր տեղը քաշուեր էր, մէյմնալ ան իջևանին



Դոն :

մէջի շնիկը յանկարծ կը ցատքէ իր տեղէն, կ'երթայ ան սնտուկը դրուած սենեկին դրանը առջև կը սկսի բոլոր ուժովը հաջել: Եւ բանան դուռը շունը մէկէն կը վազէ սնտուկին վրայ, մէյմը սնտուկը կը ճանկըռտէ, մէյմը դէպ 'ի իր տերերուն կը վազէ հաջելով: Եւ ինչ ալ կը բռնեն սնտուկը

մէկդի կը քաշեն, կ'իմանան որ մէջը շարժուն բան մը կայ. մէյմնալ բան լիքը կոտորեն՝ բանան տեսնեն որ ան սուտ վաճառականը մէջը ողջ պառկեր է. և միտքը ան է եղեր որ գիշերը ելլէ գողութիւն ընէ:

Վաճառական մը առնելիքի համար ուրիշ քաղաք գնացեր է եղեր

ձիով, իր շունն ալ մէկտեղ: Երբոր կ'առնէ ու ետ դարձեր կուգայ, քանի մը մղոն տեղ քալելէն ետքը կ'իջնայ ձիէն, ծառի մը տակ կը նստի, քսակով ստակն ալ քովը կը դնէ: Վիշ մը հանգչելէն ետքը կը մոռնայ ստակն առնելու, ձին կը հեծնի, կը սկսի վազելով երթալ: Շունը իմացեր է թէ տէրը հարկաւոր բանը մոռցաւ. կը փորձէ կընայի որ ծանր է, չկրնար վերցնել. վազելով կ'երթայ տիրոջը քովը կանչուրուտելով, հաջելով, ոռնալով կը ջանայ միտքը ձգել: Երբոր կը տեսնէ թէ տէրը չիմանար, կը սկսի ոտքը խածնել: Այնչառականը ուրիշ մտածմունքներու մէջ զբաղած՝ կարծէ թէ շունը կատղեր է. քիչ մը կանկ կ'առնէ կը կենայ, կը սկսի ցաւելով տարակուսիլ թէ ինչ ընէ. և վախնալով որ չըլլայ թէ յանկարծ շունը խածնէ զինքը, ու շանը սիրուն համար իր կեանքը կորսուի, կը հանէ մէջքէն ատրճանակը՝, երեսը մէկդի դարձուցած՝ կը պարպէ շանը վրայ. խեղճ շունը մէկէն կ'իյնայ, ու կը սկսի գետնէն քաշկըտուտելով արիւնլուայ իր տիրոջը մօտենալ: Ենոր սիրտը չդիմանար, կը զարնէ ձին՝ կը վազէ կ'երթայ, մտքէն ափսոսալով որ սիրուն շնիկս ալ աղէկ էր ինծի քան թէ աս ստակը: Եւ ըսելով ձեռքը կ'երկնցընէ քսակը նայելու, տեսնէ որ տեղը չէ. մէկէն միտքը կուգայ ըրած անխեղճութիւնը. կ'իմանայ իր շանը ողիկ ողիկ գալուն պատճառը. կը դարձնէ ձիուն գլուխը, վազելով շիտակ կ'երթայ քսակը նայելու: Այնչառական տեսնէ որ շունը անանկ արիւնլուայ կիսամեռ քսկըտուտելով գնացեր է ինչուան անստրկին քովը պահպանութիւն կ'ընէ եղեր. ուստի իր տէրը տեսածին պէս՝ կը սկսի պոչը շարժել, ու աշխատիլ անոր քովը երթալ: Տէրը գուրգուրալով կը շոյէ իր հաւատարիմ շնիկը, բայց մէկքանի վայրկեանէն խեղճ շանը հեքը կը կտրի,

աչուրները կը գոցէ: — Վրանի մը պատմութիւններ ու գիտելիքներ ալ յաջորդ տետրին մէջ կը դնենք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Լճափի գետնէն վրայ:

Լճափի գետնէն ան տեսակ բոյսերը, որոնց հունտը ալիւրի նիւթ ըլլալով՝ մարդկանց ու անասնոց կերակուր կ'ըլլայ. որ են ցորեն, հաճար, գարի, վարսակ, կորեակ, մնրացորեն, բրինձ, և այլն. ասոնց վրայ զատ զատ խօսինք:

Ցորեն և:

Ցորենը որչափ որ շատ կը գործածուի՝ այնչափ ալ շատ կը գտնուի. իրեն ոճը կամ ցողունը կենդանեաց կերակուր կ'ըլլայ, ու ոտքերնուն տակ կը փռելու համար կը գործածուի. հունտին ալիւրէն հաց ու դդմաճ՝ կը շինուի, և թեփը հաւերուն կը տրուի. կրնանք ըսել թէ ուրիշ բոյս մը չկայ որ ցորենին չափ աննդարար ու բանի եկող ըլլայ:

Ցորենի գլխաւոր պատկերը: — Շինատենէ՝ ի վեր մարդիկ տեսնելով ցորենին հարկաւորութիւնը, ուր որ կ'երթային՝ իրենց հետ կը տանէին աս պատուական բերքը, անանկ որ հիմա աշխարհիս ամէն կողմերը կը գտնուի. տեղւոյն ու կլիմային համեմատ ցորենին տեսակներն ալ երթալով շատցան. որոնց առջինը հայաստանի ցորենները կրնան սեպուիլ, որովհետեւ հաւանական է որ քաղնի անգամուն Լճամայ ձեռքովը ան բերքեր երկիրներուն մէջ ցանուեցաւ. բայց ասոնք ալ քանի մը տեսակ բաժնուելուն համար՝ ասոնց վրայ համառօտ մը խօսինք:

Վիշաւոր տեսակները իրեք են.